ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2014 թվականի N 308-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի 6.3.1 կետի պահանջները՝ **որոշում եմ.**

1. 2014 թվականի հուլիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում>> թեմայով:

2. ՈՒսումնավարժությանն ընդգրկել՝

1) Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը,

2) Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ,

3) ճանապարհային ոստիկանության 1 հաշվարկ,

4) <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության շտապ բուժօգնության ծառայության գծային բրիգադը:

3. ՈՒսումնավարժության ղեկավար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը:

4. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալը:

5. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող հատուկ տակտիկական ուսումնավարժության պլանը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության սխեման՝ համաձայն N 4 հավելվածի:

6. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2014թ. հուլիսի 18-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հաստատմանը:

2) կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի:

3) մինչև 2014 թվականի հուլիս 18-ը զեկուցել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան զույքով և հանդերձանքով:

2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ:

3) ուսումնավարժության անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հուլիսի 18
ք. Հրազդան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-ԻՆ N 308-Ա ՈՐՈՇՄԱՆ

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	2	3
	Կ. Մաղաքյան	շտաբի պետի տեղակալ խաղարկման և վերլուծման գծով, ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ փ/ծ մայոր
	Պ. Պետրոսյան	գործնական միջոցառումների խմբի ղեկավար, Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ մայոր
	Ա. Սողոմոնյան	գործնական միջոցառումների խմբի անդամ, ուսումնական տեղամասի ղեկավար, Կոտայքի մարզային փրկարարական վարչության Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փ/ծ ավագ լեյտենանտ
	Ա. Խաչատրյան	գործնական միջոցառումների խմբի անդամ, Կոտայքի մարզային փրկարարական վարչության Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատի հերթափոխի պետ, փ/ծ ենթասպա

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-ԻՆ 308-Ա ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Ց Ո Ւ Ց Ա Յ Ի Ն Պ Լ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու	Նշումներ
1	2	3	4	
1. Կազմակերպչական միջոցառումներ				
1)	Ելակետային տվյալների որոշում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
2)	հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման վայրի տեղազննություն	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Գործնական խմբի ղեկավար	
2. Ուսումնավարժության փաստաթղթերի մշակում				
1)	Ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին մարզպետի կարգադրության նախագծի մշակում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի	
2)	Մտահղացման սխեմայի կազմում	մինչև 2014թվականի	Ցուցադրական հատուկ տակտիկական	

		հուլիսի 18-ը	ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3)	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
4)	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
3. ՈՒսումնավարժության վայրի և մասնակիցների նախապատրաստում				
1)	Ուսումնավարժության մասնակիցներին ուսումնավարժության փաստաթղթերի հետ ծանոթացում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբ	
2)	Մասնակիցների հրահանգավորում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Գործնական միջոցառումների խմբի ղեկավար	
3)	Ուսումնավարժության վայրի նախապատրաստում	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Գործնական միջոցառումների խմբի ղեկավար	
4)	Զեկույց հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարին ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին	մինչև 2014թվականի հուլիսի 18-ը	Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-ԻՆ 308-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Թեմա <<Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ճանապարհատրանսպորտային պատահարի /ՃՏՊ/ դեպքում>>:

Ուսումնական նպատակները

1. Ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը ստեղծված իրավիճակում իրենց առջև դրված խնդիրների կատարման ուղղությամբ:
2. Կատարելագործել անձնակազմերի գործնական հմտությունները ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը

Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի ուժերը:

Տեղությունը

2014թ.հուլիսի 21-ին ժամը 11:00-ից մինչև 11:35-ը:

Անցկացման վայրը

ք.Չարենցավան, Երիտասարդականն գործարանային փողոցների խաչմերուկ:

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացում

Ստեղծված իրավիճակը. Ս/թ.-ի հուլիսի 21-ին ժ.11:00 Չարենցավան քաղաքի Երիտասարդության և Գործարանային փողոցների խաչմերուկում <<Օպել>> մակնիշի ավտոմեքենան բախվել է դեպի Երիտասարդական փողոց ընթացող <<ՎԱԶ 2106 >> ավտոմեքենային: Ճանապարհա տրանսպորտային պատահարի հետևանքով <<Օպել>> մակնիշի մեքենայի ուղևորը ստացել է մարմանական վնասվածքներ գլխի շրջանում, իսկ վարորդը ոտքի կոտրվածք: Վթարի հետևանքով այրվում է <<ՎԱԶ 2106 >> մակնիշի ավտոմեքենայի շարժիչը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հ/հ	ԺԱՄԱՆԱԿ (աստղա-բաշխական)	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.	11:00-11:02	Ազդարարման իրականացում	Տալիս է հրահանգ ուսումնավարժությունը սկսելու վերաբերյալ:	Ականատեսներից ստացվել է ահազանգ այն մասին, որ Չարենցավանի Երիտասարդության և Գործարանային փողոցների խաչմերուկում տեղի է ունեցել ճանապարհատրասպորտային պատահար: Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչը զեկուցում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի ծառայություն, ազդարարում Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին և թիվ 47 հրշեջ փրկարարական ջոկատի (Չարենցավանի ՀՓՋ) հեռախոսավարին, շտապ օգնության ծառայությանը և ճանապարհային ոստիկանությանը: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի 911 ծառայության օպերատորը սահմանված կարգով դեպքի վայր է ուղարկում թիվ 47 հրշեջ փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:
2.	11:04-11:15	Հրշեջ փրկարարական ստորաբաժանման ժամանում և փրկարարական ու հրդեհաշիջման աշխատանքների իրականացում:	Ներկայացնում է ստեղծված իրավիճակը և տալիս կարգադրություն փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացման վերաբերյալ	Ժամը 11:04 թիվ 47 հրշեջ փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ ժամանում է դեպքի վայր: Հրշեջ փրկարարական ջոկատի ուժերը իրականացնում են բացազատում, հետախուզություն, վթարված մեքենայից տուժածների դուրս բերում և այրվող մեքենայի հրդեհաշիջում:

3.	11:04-11:15	Հերթապահ ծառայությունների ժամանում և հասարակական կարգի պահպանության իրականացում ու առաջին բուժօգնության ցուցաբերում:		1) Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի ուժերը և իրականացնում են երթևեկության սահմանափակում և հասարակական կարգի պահպանություն: 2) <<Չարենցավան բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունն իրականացնում է տուժածների առաջին բուժօգնության ցուցաբերում և տեղափոխում մասնագիտացված բուժհաստատություններ:
4.	11:15-11:25	Վթարված մեքենաների ճանապարհի երթևեկելի մասից դուրս բերում	Հետևում է իրականացվող աշխատանքների ընթացքին:	Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատի փրկարար ծառայողները իրականացնում են երթևեկությունը վերականգնելու աշխատանքներ:
5.	11:25-11:35	Ուսումնա-վարժության արդյունքների ամփոփում և ավարտ	Ուսումնավարժության ղեկավարը գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշելով թերությունները, տալիս հանձնարարականներ դրանց վերացման ուղղությամբ և հայտարարում է ուսումնավարժության ավարտ:	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-ԻN 308-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՍԽԵՄԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ